

Կ Ա Ր Գ

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀՀ ՊՆ «ԼԵՈՆԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ՀԱՆԳՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են ՀՀ ՊՆ «Լեոնային Հայաստան» հանգստյան տուն» պետական հիմնարկում (այսուհետ՝ Հանգստյան տուն) ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողների, քաղաքացիական ծառայության ու հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց (այսուհետ՝ Շահառու) հանգիստը կազմակերպելու կարգը և պայմանները:

2. Շահառուներն իրենց հանգիստը Հանգստյան տանն անցկացնելու համար կարող են ուղեգրվել տարեկան մեկ անգամ՝ մինչև 10 օր տևողությամբ:

3. Շահառուների հանգստի կազմակերպման ապահովման նպատակով Հանգստյան տան տնօրինության կողմից մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը կազմվում և ՊՆ գործերի կառավարչին են ներկայացվում Հանգստյան տան հաջորդ տարվա հնարավորությունները (Շահառուների քանակի և հոսքերի մասով), որի հիման վրա ՊՆ գործերի կառավարիչը կազմում է ուղեգրերի բաշխման ժամանակացույցը և հաստատման ներկայացնում ՊՆ գլխավոր քարտուղարին: Հաստատված ուղեգրերի բաշխման ժամանակացույցը 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքվում է ՀՀ ՊՆ և ՁՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումներ, գորամիավորումներ և առանձին գորամասեր:

4. ՊՆ գործերի կառավարչին իրավունք է վերապահվում եռամսյակը մեկ անգամ իրականացնել ուղեգրերի բաշխման ժամանակացույցի ճշտում:

5. Հանգստյան տան ուղեգրերի բաշխման ժամանակացույցը ներգրավում է յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 7-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հաշվի առնելով Հանգստյան տան կողմից ներկայացված հնարավորությունները:

6. Շահառուներին մեկ հոսքի ընթացքում ուղեգրերի բաշխումն իրականացվում է հետևյալ համամասնությամբ՝

1) զինծառայողներ, քաղաքացիական ծառայողներ ու հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք և նրանց ընտանիքների անդամներ՝ մինչև 70 տոկոս,

2) կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձինք՝ մինչև 12 տոկոս,

3) հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներ՝ մինչև 10 տոկոս,

4) երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներ՝ մինչև 8 տոկոս:

7. Շահառուների՝ Հանգստյան տան յուրաքանչյուր տարվա ուղեգրերի բաշխման ժամանակացույցը կազմվում է հետևյալ համամասնությամբ՝ ուղեգրերի 20 տոկոսը՝ ՀՀ ՊՆ և ՋՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների, իսկ 80 տոկոսը՝ զորամիավորումների և առանձին զորամասերի անձնակազմին:

8. Յուրաքանչյուր ուղեգիր ապահովում է Շահառուի կեցությունը մեկ երկտեղանի սենյակում:

II. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ, ՈՒՂԵԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Շահառուներին Հանգստյան տան ուղեգրեր (ձև 1) հատկացվում են ստորաբաժանումների ղեկավարների կողմից Հանգստյան տան ուղեգրերի բաշխման ժամանակացույցի համաձայն:

10. Զինծառայողները, քաղաքացիական ծառայողներն ու հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք Հանգստյան տուն ներկայացնում են՝

1) ուղեգիրը,

2) արձակուրդային թերթիկը կամ արձակուրդի հրամանի պատճենը,

3) իր և ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերը, ամուսնության և երեխաների ծննդյան վկայականները,

4) հանգստի ընթացքում վերականգնողական թերապիայից օգտվելու ցանկության դեպքում՝ բժշկական գրքույկը կամ բժշկական քարտը:

11. Օրենքով սահմանված կարգով զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձինք Հանգստյան տուն են ներկայացնում՝

1) ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության կողմից հատկացված ուղեգիրը (ձև 2),

2) ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու համապատասխան տեղեկանքը կամ կենսաթոշակի վկայականը,

3) անձը հաստատող փաստաթուղթը,

4) վերականգնողական թերապիայից օգտվելու ցանկության դեպքում՝ բժշկական գրքույկը կամ բժշկական քարտը:

12. Հանգստի ընթացքում Շահառուների վերականգնողական թերապիայի ընդունման մեթոդները և տեսակները որոշվում են Հանգստյան տան մասնագետների կողմից՝ բժշկական գրքույկում (բժշկական քարտում) առկա նշումների հիման վրա:

13. Երկարամյա ծառայության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձինք Հանգստյան տուն ուղեգրվելու նպատակով մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Հանգստյան տան ուղեգիր տրամադրելու դիմումը ներկայացնում են ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչություն, որն էլ իրականացնում է ներկայացված դիմումների հաշվառումը և հերթագրումը: Դիմումները կարող են ներկայացվել փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթային դիմումը կարող է ներկայացվել առձեռն կամ փոստային առաքման միջոցով:

14. Սույն Կարգի 10-րդ կետում նշված Շահառուները Հանգստյան տան ուղեգրեր տրամադրելու դիմումը ներկայացնում են՝

1) ՀՀ ՊՆ և ՋՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմը՝ իրենց կառույցների ղեկավարներին,

2) զորամիավորումների և զորամասերի անձնակազմը՝ զորամիավորման (զորամասի) հրամանատարին:

15. Հանգստյան տան տնօրինությունը յուրաքանչյուր հոսքից առնվազն 2 օր առաջ, իսկ հոսքերի միջև ընկած ժամանակահատվածում ազատ սենյակների առկայության դեպքում 1-օրյա ժամկետում ՀՀ ՊՆ գործերի կառավարչին է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն: Հոսքը լրահամալրելու համար

ՀՀ ՊՆ գործերի կառավարիչը շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված հայտերի հիման վրա թույլատրում է ազատ սենյակները համալրել Շահառուներով՝ համաձայն ուղեգրերի բաշխման համար սահմանված համամասնության պահանջների:

16. Շահառուն Հանգստյան տուն ներկայանում է ուղեգրում նշված առաջին օրվա մինչև 12:00-ն:

17. Շահառուի համար հանգստի կազմակերպումն իրականացվում է անվճար:

18. Ֆունկցիոնալության խոր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողին ուղեկցող ընտանիքի մեկ անդամի կամ խնամակալի Հանգստյան տան կեցությունը կազմակերպվում է անվճար:

III. ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԻՑ ՎԱՂԱԺԱՄԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Հանգստյան տնից Շահառուի՝ նախատեսված ժամկետից շուտ դուրսգրվելն իրականացվում է հետևյալ դեպքերում.

1) սահմանված կարգով արձակուրդից հետ կանչվելիս,

2) ըստ Շահառուի ցանկության:

20. Շահառուի կողմից Հանգստյան տան տնօրինության կողմից սահմանված կարգը խախտելու դեպքում դադարեցվում է վերջինիս ուղեգրի գործողությունը:

IV. ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

21. Հանգստի կազմակերպման, ֆինանսական բնույթի և այլ փաստաթղթերը պահպանվում են ՀՀ կառավարության 2019թ. ապրիլի 4-ի N 397-Ն որոշմամբ սահմանված ժամկետների համաձայն:



ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ 20__ թ.

N _____

ՀՀ ՊՆ «ԼԵՌՆԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Ո Ի Ղ Ե Գ Ի Ր

Ուղեգրվում է՝ _____
(կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանիքի _____ անդամներով ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն»՝

ս.թ. _____ -ից մինչև _____ -ը ներառյալ:

Ուղեգրվողի հետ մեկնող ընտանիքի կազմը՝

1. կինը (ամուսինը)՝ _____, ծնված _____ թ.,
(անունը, հայրանունը, ազգանունը)

2. դուստրը՝ _____, ծնված _____ թ.,
(անունը, հայրանունը, ազգանունը)

3. որդին՝ _____, ծնված _____ թ.,
(անունը, հայրանունը, ազգանունը)

N _____ գործառնախի հրամանատար

(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

_____ 20__թ.

N _____

ՀՀ ՊՆ «ԼԵՌՆԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

Ո Ւ Ղ Ե Գ Ի Ր

Ուղեգրվում է՝ -----

(զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ, զինվորական հաշմանդամ, երկարամյա զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անձ)

ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն» պետական հիմնարկ՝ սույն թվականի «___»-ից մինչև «___»-ը ներառյալ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ